ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

Կ-256-06,05.2022,18.05.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 9-րդ հոդվածի 4-րդ մասում «կարգավորումները» բառից հետո լրացնել «, բացառությամբ Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման,» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-րդ կետ.

«19 հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող՝ պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարների հաշվին կատարվող ծախսերը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 202-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ռոյալթիի հաշվարկման նպատակով կիրառվում են հետևյալ հարկման բազաները.

1) $Բ_1$ - հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի, խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի (այսուհետ՝ սույն բաժնում խտանյութի հետ միասին՝ արտադրանք) իրացման շրջանառություն.

2) $Բ_2$ - շահույթ նախքան հարկումը, որը հաշվարկվում է որպես $Բ_1$-ի և Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված՝ $Բ_1$-ի հետ անմիջականորեն կապված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն.

3) Բ$_3$ - շահույթ նախքան հարկումը, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով: Ընդ որում, Բ$_3$-ի հիման վրա ռոյալթիի գումարը հաշվարկվում է միայն այն դեպքում, երբ ռոյալթի վճարողի մոտ Բ$_3$-ը մեծ է 0-ից.

$$Բ_3 = Բ_2 - ՖԾ - (Բ_1 \times R_1) - (Բ_2 \times R_2) - (Բ_1 \times 0.15)$$

ՖԾ - Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ֆինանսական ծախսեր, որոնք Բ$_3$ -ի հաշվարկման նպատակով հաշվի են առնվում Կառավարության սահմանած կարգով, դեպքերում և չափերով:

R$_1$ և R$_2$ –ը Օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված ռոյալթիի դրույքաչափեր են:

Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ Բ$_2$-ի հաշվարկման ժամանակ՝

1) իրացման շրջանառությունից ֆինանսական ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալ-թիի և նախորդ տարիների հարկային վնասների նվազեցումը չի կատարվում՝ անկախ այդ ծախ-սերն ու հարկային վնասները հանքավայրերի շահագործման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության հետ կապված լինելու հանգամանքից.

2) բնօգտագործման վճար վճարողի վարչական ծախսերի, իրացման ծախսերի և ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի նվազեցումները հաշվի են առնվում համախառն եկամտի մեջ ռոյալթիի իրացման շրջանառությանը համապատասխանող տեսակարար կշռով:».

2) 3-րդ մասի՝

1) 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Ընդ որում, խտանյութի իրացման շրջանառության հաշվարկման նպատակով հիմք է ընդունվում Կառավարության սահմանած ցանկում ներառված լաբորատորիաների կողմից տրված եզրակացությունների հիման վրա որոշված՝ մատակարարված խտանյութում մետաղ-ների վերջնական պարունակությունը:».

2) 2-րդ կետի առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Խտանյութի մատակարարման պայմանագրում գնորոշման համար խտանյութի մատա-կարարման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամիսը ներառյալ ժամանակահատվածից ավելի երկար ժամանակահատված նախատեսված լինելու դեպքում մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալի գինը հաշվարկելու համար հիմք են ընդունվում խտանյութի մատակա-րարման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա համար ձևավորված՝ մետաղների միջազգա-յին միջին գները.»,

3) 3-րդ կետի «գ» ենթակետում «20» և «80» թվերը փոխարինել համապատասխանաբար «15» և «85» թվերով:

Հոդված 4. Օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ռոյալթիի բազաների համար սահմանվում են ռոյալթիի հետևյալ դրույքաչափերը.

1) $Բ_1$-ի համար R_1, որը հավասար է 4 տոկոսի,

2) $Բ_2$-ի համար R_2, որը հավասար է 12.5 տոկոսի,

3) $Բ_3$-ի համար R_3, որը հավասար է 15 տոկոսի:»:

Հոդված 5. Օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասում «ռոյալթիի բազայի և Օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող դրույքաչափի հիման վրա» բառերը փոխարինել «Օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ռոյալթիի բազաների և Օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերի արտադրյալով հաշվարկված գումարների հանրագումարով» բառերով:

Հոդված 6. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և կիրառվում է նաև 2022 թվականի հաշվետու տարվա շահութահարկով հարկման բազան որոշելու նպատակով:

Հոդված 7. Անցումային դրույթներ

1. Օրենսգրքի 222-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվարկվող ռոյալթիի կանխավճարը 2023 թվականի հաշվետու տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար հաշվարկվում է նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված ռոյալթիի գումարի 30 տոկոսի չափով:

2. Ռոյալթիի $Բ_3$ բազայի հաշվարկման նպատակով ֆինանսական ծախսերի ՖԾ նվազեցման կարգը, դեպքերը և չափերը, ինչպես նաև խտանյութի իրացման շրջանառության հաշվարկման նպատակով հիմք ընդունվող՝ մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակության վերաբերյալ եզրակացություն տրամադրող լաբորատորիաների ցանկը Կառավարությունը սահմանում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 9-րդ հոդվածի 4-րդ մասում «կարգավորումները» բառից հետո լրացնել «, բացառությամբ Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման,» բառերը:

Հոդված 8. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-րդ կետ.

«19) հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող՝ պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարների հաշվին կատարվող ծախսերը:»:

Հոդված 9. ~~Հոդված 2~~ Օրենսգրքի 202-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Ռոյալթիի հաշվարկման նպատակով կիրառվում են հետեւյալ հարկման բազաները.

1) $Բ_1$ - հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի, խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի (այսուհետ՝ սույն բաժնում խտանյութի հետ միասին՝ արտադրանք) իրացման շրջանառություն.

2) $Բ_2$ - շահույթ նախքան հարկումը, որը հաշվարկվում է որպես $Բ_1$ -ի եւ Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված՝ $Բ_1$ -ի հետ անմիջականորեն կապված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալթիի եւ նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն.

3) $Բ_3$ - շահույթ նախքան հարկումը, որի մեծությունը որոշվում է հետեւյալ բանաձեւով. Ընդ որում, $Բ_3$-ի հիման վրա ռոյալթիի գումարը հաշվարկվում է միայն այն դեպքում, երբ ռոյալթի վճարողի մոտ $Բ_3$ -ը մեծ է 0-ից.

$$Բ_3 = Բ_2 - ՖԾ - (Բ_1 \times R_1) - (Բ_2 \times R_2) - (Բ_1 \times \cancel{0.1}\,0.15)$$

ՖԾ - Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ֆինանսական ծախսեր, որոնք $Բ_3$ -ի հաշվարկման նպատակով հաշվի են առնվում Կառավարության սահմանած կարգով, դեպքերում և չափերով:

- ~~եթե փոխառու ռոյալթի վճարողը համարվում է ցուցակված Կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսայում, եւ փոխառությունը ներգրավվում է փոխկապակցված չհամարվող փոխատուից,~~

~~- եթե փոխատու ֆինանսական կազմակերպությունը փոխկապակցված չէ փոխառուի հետ եւ փոխատու ֆինանսական կազմակերպությունը համարվում է ցուցակված Կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսայում կամ փոխատուն ընդգրկված է Կառավարության սահմանած՝ միջազգային զարգացման կազմակերպությունների ցանկում:~~

~~Սույն պարբերությամբ նախատեսված դեպքերում $Բ_3$-ի հաշվարկման նպատակով ֆինանսական ծախսերը հաշվի են առնվում փոխառուի կամ փոխատուի՝ ցուցակված լինելու ժամանակահատվածի՝ հաշվետու տարվա մեջ ունեցած տեսակարար կշռին համապատասխանող չափով:~~

R_1 եւ R_2-ը Օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված ռոյալթիի դրույքաչափեր են:

Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ $Բ_2$-ի հաշվարկման ժամանակ՝

1) իրացման շրջանառությունից ֆինանսական ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալթիի եւ նախորդ տարիների հարկային վնասների նվազեցումը չի կատարվում՝ անկախ այդ ծախսերն ու հարկային վնասները հանքավայրերի շահագործման եւ (կամ) մետաղի խտանյութի արտադրության հետ կապված լինելու հանգամանքից.

2) բնօգտագործման վճար վճարողի վարչական ծախսերի, իրացման ծախսերի եւ ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի նվազեցումները հաշվի են առնվում համախառն եկամտի մեջ ռոյալթիի իրացման շրջանառությանը համապատասխանող տեսակարար կշռով:»,

2) 3-րդ մասի՝

1) 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Ընդ որում, խտանյութի իրացման շրջանառության հաշվարկման նպատակով հիմք է ընդունվում Կառավարության սահմանած ցանկում ներառված լաբորատորիաների կողմից տրված եզրակացությունների հիման վրա որոշված՝ մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակությունը:»:

~~1)~~ 2). 2-րդ կետում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նախադասություն.

«Խտանյութի մատակարարման պայմանագրում գնորոշման համար խտանյութի մատակարարման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամիսը ներառյալ ժամանակահատվածից ավելի երկար ժամանակահատված նախատեսված լինելու դեպքում մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալի գինը հաշվարկելու համար հիմք են ընդունվում խտանյութի մատակա-

րարման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա համար ձեւավորված՝ մետաղների միջազգային միջին գները.»,

~~2)~~ 3) 3-րդ կետի «գ» ենթակետում «20» եւ «80» թվերը փոխարինել համապատասխանաբար «15» եւ «85» թվերով:

Հոդված 10. ~~*Հոդված 3.*~~ Օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ռոյալթիի բազաների համար սահմանվում են ռոյալթիի հետեւյալ դրույքաչափերը.

1) $Բ_1$ -ի համար R_1, որը հավասար է 4 տոկոսի,

2) $Բ_2$ -ի համար R_2, որը հավասար է 12.5 տոկոսի,

3) $Բ_3$ -ի համար R_3, որը հավասար է 15 տոկոսի:»:

Հոդված 11. ~~*Հոդված 4.*~~ Օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասում «ռոյալթիի բազայի եւ Օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող դրույքաչափի հիման վրա» բառերը փոխարինել «Օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ռոյալթիի բազաների եւ Օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերի արտադրյալով հաշվարկված գումարների հանրագումարով» բառերով:

Հոդված 12. ~~*Հոդված 5.*~~

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի:

2) Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և կիրառվում է նաև 2022 թվականի հաշվետու տարվա շահութահարկով հարկման բազան որոշելու նպատակով:

Հոդված 7. Անցումային դրույթներ

3. Օրենսգրքի 222-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվարկվող ռոյալթիի կանխավճարը 2023 թվականի հաշվետու տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար հաշվարկվում է նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված ռոյալթիի գումարի 30 տոկոսի չափով:

4. Ռոյալթիի $Բ_3$ բազայի հաշվարկման նպատակով ֆինանսական ծախսերի ՖԾ նվազեցման կարգը, դեպքերը և չափերը, ինչպես նաև խտանյութի իրացման շրջանառության

հաշվարկման նպատակով հիմք ընդունվող՝ մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակության վերաբերյալ եզրակացություն տրամադրող լաբորատորիաների ցանկը Կառավարությունը սահմանում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հոդված 8.

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյան, ՀՀ ԱԺ պատգամավոր Հայկ Ցիրունյան	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մաս	Առաջարկվում է ռոյալթիի երրորդ բաղադրիչի Բ$_3$-ի հաշվարկման համար շահութաբերության շեմ սահմանել 15 տոկոսը՝ նախագծով առաջարկվող 10 տոկոսի փոխարեն:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է սահմանել, որ հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող՝ պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարների հաշվին կատարվող ծախսերը շահութահարկով հարկման նպատակով ծախս չեն համարվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ գումարները տնտեսավարող սուբյեկտներին հատկացվում են պետական կամ համայնքային բյուջեներից և շահութահարկով	**Ընդունվել է:** Նախագծում լրացվել է նոր՝ 2-րդ հոդված:	**Ընդունվել է:**

			հարկման նպատակով եկամուտ չեն համարվում:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկվում է սահմանել, որ ռոյալթիի երրորդ բաղադրիչի Բ$_3$-ի հաշվարկման նպատակով ֆինանսական ծախսերը հաշվի են առնվում Կառավարության սահմանած կարգով, դեպքերում և չափերով: Միաժամանակ, առաջարկվում է սահմանել, որ Կառավարությունը նշյալ կարգը, դեպքերը և չափերը կսահմանի մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և լրացում:	**Ընդունվել է:**
	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկվում է սահմանել, որ խտանյութի իրացման շրջանառության հաշվարկման նպատակով հիմք է ընդունվում Կառավարության սահմանած ցանկում ներառված լաբորատորիաների կողմից տրված եզրակացությունների հիման վրա որոշված՝ մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակությանը: Միաժամանակ, առաջարկվում է սահմանել, որ նշյալ ցանկը Կառավարությունը կսահմանի մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:	**Ընդունվել է:**
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծերի փաթեթով առաջարկվում է 2023 թվականի հունվարի 1-ից վերացնել խտանանյութի արտահանման համար պետական տուրքը, ինչպես նաև այն, որ նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում ռոյալթիի գծով լրացուցիչ բյուջետային եկամուտները	**Ընդունվել է:** Նախագծի 7-րդ հոդվածում կատարել է համապատասխան լրացում:	**Ընդունվել է:**

			հնարավոր է լինելու ստանալ միայն 2024 թվականի ընթացքում՝ 2023 թվականի պետական բյուջեի ընթացիկ մուտքերի տեսանկյունից խնդիրներ չստեղծելու նպատակով առաջարկվում է սահմանել, որ միայն 2023 թվականի համար ռոյալթիի կանխավճարները հաշվարկվում են նախորդ տարվա համար հաշվարկված ռոյալթիի գումարի 30 տոկոսի չափով՝ ներկայումս գործող 25 տոկոսի փոխարեն:		